

ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԵՆԻ ՏԱՐԻ



Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլ. Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տ է Լ Է Ֆ օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լիցիւով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տ է Լ Է Ֆ օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Կիրակի, յունիսի 6-ին, Բագուի հայոց ս. Լուսաւորիչ եկեղեցում պատարագից յետոյ հոգեհանգիստ կը կատարվի հանգուցեալ

ՆԵՐՍԷՍ ԱՍԼԱՆԵԱՆ ԱԹԱԲԵԿԵԱՆՑԻ

համար, որի մասին յայտնում են ծանօթներին և բարեկամներին հանգուցեալի զուտուր՝ Մարիամ Ներսէսեան և փեսան՝ Սամսոն Ստեփանեան Յարութիւնեանցները: 1—1

Իսահակ Աղաջանեան, Լեւոն Իսահակեան և Մարգարիտ Գրիգորեան Բալասանեանները, Սօֆիա Գրիգորեան և Սալատուր Փանեան Փանեանցները, Յակովբ Գրիգորեան և Եղիսարէթ Աւետեան Տէր-Յովհաննիսեանները որդեկեանցով խորին ցաւով յայտնելով՝ առաջինը իր անփոխարինելի ամուսնու, երկրորդը և չորրորդը սիրելի և անմոռաց մօր, երրորդը՝ իր սկեսրոջ, հինգերորդը իր զոքանչի, վեցերորդը՝ իր թանգագին քրոջ, եօթերորդը՝ իր տալոյ և վերջիններն իրանց սիրելի հօրաքրոջ

ԱՆՆԱ ԳՐԻԳՈՐԵԱՆ ԲԱՍԼԱՍԱՆԵԱՆՑԻ

յանկարծակի մահը, որ տեղի ունեցաւ յունիսի 1-ին գիշերվայ ժամը 1-ին, խնդրում են ազգականներին և ծանօթներին շնորհ բերել յուզարկաւորութեան, յունիսի 5-ին, շաբաթ, առաւօտեան 9½ ժամին, Վերամիսիօսկայա փողոց, № 3, բնակարան ատամնաբոյժ Փանեանի դէպի Ս. Նշան եկեղեցին, և այնտեղից Թովմանքի գերեզմանատուն: Ամբիճը ուրբաթ, յունիսի 4-ին, երեկոյեան 7 ժամին: (ու. շ.) 1—2

Վաղարշակ, Անահիտ, Հեղինէ Սիմէօնեան և Մարիամ Մարգարեան Պառաւանցները ցաւօք սրտի յայտնում են իրանց ծանօթներին և բարեկամներին՝ առաջին երեքն իրանց թանգագին հօր, իսկ վերջինն իր սիրելի սկեսայրի

ՍԻՄԷՕՆ ՊԱՌԱՒԵԱՆՑԻ

յանկարծակի մահը, որ տեղի ունեցաւ նոյնիսկ յունիսի 2-ին, երեկոյեան ժամը 10-ին, Շուշաւէրում: Թաղումը տեղի կունենայ կիրակի, յունիսի 6-ին: 1—1

ԲՈՎԱՆԴԱՅՈՒԹԻՒՆ

Տօների վերաբերութեամբ. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մի հին արձան. Նամակ Բանանց գիւղից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱՅԻՆՆԵՐ. — ՅԱՅ-ՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՍԼԱՍԻՐԱԿԱՆ. Շիրա-Ղերբը թէհրանում:

ՏՕՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՈՒԹԵԱՄԲ

Պետական խորհուրդը մայիս ամսին մի նոր որոշում կայացրեց տօների վերաբերութեամբ: Այդ որոշումով ազատու-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՇԻՐԱՂԵՐԸ ԹԵՂԵՐԱՆԻՍ

(Նամակ Պարսկաստանից)

Շիրազի են կոչվում առհասարակ Պարսկաստանում օդի և գինի քաղցրեղէնը: Այդ արհեստը արածուկած է այստեղ բացառապէս ոչ մասնատական տարրին, որ կազմում են հայերը, հրէաները և գիւրջերը—կրակապաշտ պարսիկները:

Պարսկաստանում գրեթէ ամէն տեղ կան հայ-շիրազիներ, բայց ոչ մի տեղ նրանք այնպէս մեծամասնութիւն չեն կազմում, ինչպէս թէհրանում: 400 տուն հայ-ազգաբնակչութեան մէջ, համարձակ կարելի է ասել, որ 200-ից աւելին՝ մասնազէտ-շիրազիներ են, 50 տուն ալ և ալ արհեստաւորներ—գերձակ, ոսկերիչ, հիւսն¹⁾, որոնք նոյնպէս իրանց մասնաւոր պարագմունքից դուրս՝ օղեկաճառութեամբ կամ գինեկաճառութեամբ պարագլուխ յարմար առիթը ձեռքից բաց չեն թողնում. իսկ մնացած փոքր մասը վաճառականներ են:

Շիրազի դասակարգը խիստ ազդեցութիւն ունի այստեղի հասարակական խնդիրների և առհասարակ հասարակութեան բարոյական կեանքի վրա. ուստի արժէք մանրամասն ծա-

¹⁾ Հայերի քարվաստարայում գտնված բոլոր մանրավաճառները պարագլուխ են օղեկաճառութեամբ:

թիւն է տրվում մարդկանց՝ կարգաւորել տօն օրերի գրադուհները իրանց ցանկութեան համեմատ:

Ռուսաստանը այն երկրներէն մէկն է, որտեղ տօները թիւը չափազանց մեծ է և տօները պահպանվում են պարտաւորական կերպով: Մասնաւոր առարկայից է շատ տօներ ունենալը ամուսնու, երբ կարճ միջոցում պէտք է կարողանալ վերջացնել դաշտային և առհասարակ գիւղատնտեսական աշխատանքները: Մեր երկրի լեռնային մասերում, ինչպէս և Ռուսաստանի հիւսիսային նահանգներում ամուսնու տեւում է կարճ ժամանակ, ուստի

նօթանալ նրա նկարագրի հետ:

Շիրազիները՝ շատ քիչ բացառութեամբ, չքաւոր դասակարգից են, մեծ մասը գաւառներից, գիւղերից եկած: Այդ արհեստով պարագլուխ բուն պատճառն էլ հիշեց չքաւորութիւնն է, որովհետեւ շատ չնչին դրամագլխով, քիչ աշխատանք գործադրելով՝ կարելի է այնքան վատասելի, որ հնարաւոր լինի մի բազմամարդ ընտանիք ապրեցնել մայրաքաղաքում: Բնական է ունենալ 50 թուման փող, մօտաւորապէս 100 ռ. կարելի է նրանով գնել երկու հատ կարաս, մի պղինձ—մնացածը պատրաստ է. խաղողի ժամանակ—խաղող, և չամիչի ժամանակ—չամիչ, ով ասէք ապառիկ կը հաւատայ: Կարասում գինի և օդի ունենալ մի և նոյն է թէ հնչիւն դրամ ունենալ: Ապագան առատ հունձ է խոստանում:

Այս այս հրապուրիչ հանգամանքն է, որ ամէն տարի գիւղերից տասնեակ երիտասարդներ քաղում է քաղաք:

Սկզբում՝ երբ գիւղացին գալիս է քաղաք՝ իր մօտաւոր նպատակն է փող տնտեսել, իսկ հետագայում շիրազիներն անել: Առաջին պարագմունքը, որ նա ընտրում է, ընտանիքների մէջ ծառայութիւն անելն է: Դրա համար նա ամսական ստանում է 2—3 թուման, բոլոր ծախսերից դուրս: Նա շատ լաւ հասկանում է և իմ է իր ստացած ուժիկից աշխատի փող տնտեսել ապագայի համար, այն ժամանակ շատ ուշ պիտի հասնի իր նպատակին: Սակայն քաղաք գալուց առաջ նա ար-

և սահմանափակ միջոցում պէտք է շատ գործ կատարել: Եթէ հանգամանքների շնորհիւ եղանակն էլ անցնում է անպատասխան կերպով և տեղում են յորդ անձրեւներ աշխատանքի օրերում, այն ժամանակ աշխատանքի համար վերապահված միջոցը աւելի ևս կը ճառագայտ: Հիւսիսային նահանգներում գարնան և ամառվայ վեց ամիսներում նշանակված է 77 օր տօն: Բացի դրանից տեղական ժողովուրդը ինքն ունի իր առանձին տեղական տօները, որոնք պահպանվում են աւանդաբար:

Այլի առաջ ունենալով, որ տօները չափազանց մեծ քանակով աննպաստ հանգամանքներ է ստեղծում գիւղական ժողովրդի և առհասարակ աշխատող դասակարգի համար, պետական խորհուրդը որոշեց, որ տօն օրերում աշխատելու և չաշխատելու իրաւունքը թողնել մարդկանց կամքին և այդպիսով թոյլ տալ, որ թէ կիրակի, և թէ ուրիշ տօներին ու հանգիստ օրերում իւրաքանչիւր մարդ իրաւունք ունենայ իր բարեհայեցողութեամբ կարգադրել իր ժամանակը, առանց որ և է արգելի իշխանութեան կողմից: Այդ պատճառով օրենսդրութիւնից դուրս է գցվում այն յօդուածը, որ արգելում էր հասարակական աշխատանքներ կատարել կիրակի և տօն օրերում:

Այդպիսով՝ տօների վերաբերութեամբ վերցվում են արգելքներ և նրանց պահպանել չը պահանջել թողվում է ազգաբնակչութեան: Աշխատանքի մարդկանց իրանց է մնում հաշի անել իրանց կեանքի և անտեսութեան պայմանները և նրանց համեմատ վարվել, որպէս զի գիւղատնտեսական բոլոր գործերը ժամանակին և աշխատութեամբ կատարվեն և ոչ որ առիթ չունենայ գանգատվելու, թէ նրա անտեսութեանը վնասեցին աւելորդ արգելքները և խոչընդոտները:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ՀԻՆ ԱՐՁԱՆ

Ինձ վիճակից գտնել մեր հին ձեռակերտներից մի արձան, որ իր բնականութեամբ, շքեղութեամբ ու հուղեքանքով կարող է տալ նախադրեց տեղ գրաւել կովկասեան հուղեքանքների շարքում: Նա ձուլված է կաւից չորս վերջով

դէն իր խորհրդատուներից դասեր առել է, որ փող տնտեսելու ամենամանրամասն պայմաններից մէկ զարկելն է—հաշիները միջից անհկատելի կերպով դողալու: Ամէն մի ընտանիք, որ ծառայ է վարձու, այդ պայմանի հետ արդէն հաշտ է, բայց ոչ որ չէ ուղեցիլ ծառաներին այդ ախտից փրկել, լաւ հասկանալով՝ որ դրա միակ միջոցը—բաւարար վարձատրութիւնն է: Ծառան՝ իբրեւ նոր եկած և իր պաշտօնին անհմուտ, այդ յանցանքի մէջ մի քանի անգամ ընկնում է, մի քանի տեղից վաղդվում, մինչև որ փորձառութիւն է ձեռք բերում: Վերջապէս՝ երբ աշխատելով է մի վեց ամիս շարունակաբար մէկի մօտ ծառայել, մեծ դժուարութիւն չէ այդքան ժամանակամիջոցում իր բաղձալի 50 թումանը տնտեսել: Մի երկու ամիս և՛ արդէն պատրաստ է կարասը, պղինձը և շիրազիութեան համար ամէն պարագաները: Ծառայում է պարսիկների թաղում մի բնակարան վարձելու և ընտանիքն էլ գիւղից քաղաք բերելու:

Շիրազիների գործունէութեան ասպարէզը պարսիկների թաղն է, իսկ նրանց յաճախորդները բացառապէս պարսիկներն են այն էլ առհասարակ չափազանց դասակարգը: Չը նայելով՝ որ մասնատական կրօնը խստիւ արգելում է ոգիւնից ըմպելիները գործածութիւնը, բայց պարսիկները աւելի մոլեգնաբար են գործածում:

Թէ ինչպիսի կեղտի և ապակաւութեան մէջ է ապրում շիրազին իր ընտանիքով, ինչ առհասարակ կեանք է վարում նա ամբողջ օրը—

բարձրութեամբ, 4½ երկարութեամբ, գեղաբուրհատի անթերի կատարելութիւնով:

Չորի վրա անցկացնելու համար ունի յատկապէս դատարկ պատուանդան. նա մի կուռք է բարձրից պաշտովիւ սահմանված: Նա իր բնականութեամբ ու գեղաբուրհատով կարող է համարձակ մրցել արդի եւրօպական կատարելագործված արձանների հետ:

Ձիւ վրա բազմած է՝ բարձր արքայական թագը գլխին, ապարօքը մինչև թիկունքը հոշտի սփռած, գեղատեսիլ թագաւորը, ձեռքը լայնաբերան սրի դաստապանին դրած: Նրա հագուստի իւրաքանչիւր մասը, զէնն ու զարդը, վարապաշտակի գոհար շէնքը, պարանոցի ինքնակալի մանեակը, ոտից մինչև գլուխ հագուստի մասերն ու ծալքերը պարզ որոշվում են Իսկ ձին իր բոլոր սարք ու կարգով, ծառա ելած, որսը, մի այծեամբ ընկած, բերձէն նրան հասած, անչափ բնական են ու անթերի:

Տեսան մի քանի յայտնի գիւտններ. ոմանք ենթադրում են Ուրարտեան շրջանի գործ: Բայց բոլորովին մեղ անծանօթ թագի ձևը, ձիւտերի անմօրուս, կանացի դէմքը՝ ինձ ենթադրել կը տայ,—մի գուցէ աստուծոհիւսիցից մինչև է, ինչպէս Հեկէնացոյ Աթենաս Պալլասը. երբ և իցէ հայերը երեակալէն են որ և իցէ Աստուծոյ սպառազէն, ձիւտը: Չը լինի՞ Վահագն է,—և ի բոցոյն պատանեկիկ վաղէր... Որն էլ որ լինի, նրա լուսանկարն ուղարկեց Պարիզ, գիտնական աշխարհի հետազոտութեան համար:

Արձանը գտնվել Փամբակի շրջանում, ինքնական թւերին երկաթուղու շինութեան ժամանակ գտնված հուղեքանք մասնօրէն բնավայրում, Չոթու գիւղի մօտ, Կեչուսակ կոչված սարի կրճէց հսող հեղեղատեղի, որի հետ են 2 հատ մարդկային գանգի ձևով կաւաշէն անօթներ, կամ կուռքերի մասեր, մի փոստ նիզակ, մի տարօրինակ փոքր դանակ, մի բրօնզեայ վաղաձև, մէջ տեղը ծակ, դրամ կամ զարդ, որի մի կողմում ժանգի մէջ նշմարվում են անծանօթ տառեր:

Նոյն տեղից գտնվել է Տիգրան Բ.-ի և նրանից հին թագաւորների և հոռօյեցի ոսկի արձաթ դրամներ. այս բոլորն ապացուցանում են արձանի անուրանալի հնութիւնը: Պարզ է, որ հեղեղն է բերել Կեչուսակի գլուխից, ուր ցաւ ու ցրիւ բարերն ինձ ենթադրել կը տան, թէ եղել է շինութեան տեղին: Սէյլան

աշուաւակ:

Առևտուրի ժամանակը սկսվում է առհասարակ երեկոյեան դէմ, արեւ մայր մանելիս, երբ պարսիկները գործից դադարած՝ խառութները փակում և բազալից տուն են վերադառնում: Մինչև այդ ժամանակը մեր օրվաճառը պարագ է: Առաւօտից մինչև երեկոյ նստում է փողոցի դրանը, արեւի տակ և յօրանջում. ձանձրոյթից գնում է ներս, կանգնում կարասի գլխին մի-երկու թաս կոնծում, դուրս է գալիս նորից նստում, ընում. էլի է դնում խում, էլի գալիս և այսպէս, մինչև իր յաճախորդների գալը ինքն արդէն հարբած է: Ծանաւէտ առևտուրը պահանջում է, որ ծախողն էլ գնողին ընկերակցէ խմելու ժամանակ: Եթէ մի քանի բաժակ էլ նրանց հետ խմեց, արդէն ինքն իրան կառավարելու ընդունակութիւնը կը կորցնի: Երբեմն այդպիսի ժամանակ օգնութեան են գալիս նրա կիներ, աղջիկը և երեխաները: Ուրիշ անգամներ պարսիկը մտնում է այդ ընտանիքի մէջ, տղամարդի բացակայութեան ժամանակ և Աստուծոյ գիտէ, թէ ինչ դրամներ է ստեղծում այնտեղ: Ծեծ, կոխ, արեւահեղութիւն սողովական բաներ են շիրազիների շրջանում. և այդպիսի դէպքում միշտ սուրճից հայն է, որովհետեւ նա է հարեցրել պարսիկին:

Անարգելում է ամենից շիրազին, մինչև այն աստիճան, որ եթէ մէկը լաւ, թէ իր աղջիկը կամ տղան դպրոցում նրա աղջկայ կողքին մի և նոյն նստարանի վրա է նստում, դպրո-

ՆԱԽԱԿ ԲԱՆԱՆՑ ԳԻՒՂԻՑ

Մայիսի 30-ին

Վերջին տարիներս Գանձակի բժշկները ուշադրություն դարձրին մեր գիւղի բնակիչներին վրա ու զանազան նրան շատ առողջարար, մանաւանդ թորախտաւորների համար, այդպիսի հիւանդներին սկսեցին ուղարկել Բանանց: Բժշկման աշոյ գէպերը նպաստում են այն բանին, որ թորախտաւորների հոսանքը գէպի մեր գիւղը տարեց տարի աւելի ու աւելի նկատուի է դառնում, հիւանդները գալիս են գարնանը ու մնում մինչև աշնան սկիզբները: Գիւղի հրաշալի օդն ու ջուրը օգնում, կազդուրում են նրանց. այդպիսով կեսաւեր են փրկվում կորստից. ուրախալի է մատնացող անկ աշոյ, բայց խիստ ցաւալի է այն, որ շնորհիւ եկուոր հիւանդներին, թորախտ բռն է դրել մեր գիւղում ու նկատելի կերպով տարածվում է գիւղացիներին մէջ, որոնք մաքառել հիւանդութեան դէմ չը գիտեն, ի հարկէ, ու շնորհիւ իրանց չբաւորութեան գուրկ են մաքառելու միջոցները իսկ: Հիւանդութիւնը գոհն է տանում արքատ ընտանիքներին գլխաւորապէս. միջին թուով վերջին 5—6 տարեկան ընթացքում տարին մինչև ութ գոհ կը գնայ քոֆալիսից և այդ մի գիւղում, որն ունի սրանչիլի բնութիւն, անմասն օդ ու ջուր, որի ազդեանքով թիւը 1800 հոգուց չէ անցնում, որտեղ մի տասն-քսան տարի առաջ թորախտի անունն անգամ չէին լսած, որտեղ երկարակեցութիւնը (80, 90, նոյն իսկ 100 տ. հասնող) սովորական ու ամենուրեք յայտնի երևոյթ էր առաջ:

Առաջին թորախտաւորները երկացին մեր գիւղում 80-ական թուականներին սկզբներին, ու նրանց հետ միասին թորախտը մուտք գործեց գիւղը: Հիւանդութեան տարածման պատճառն այն է գլխաւորապէս, որ թորախտաւորները տարւում են գիւղացիներին բնակարաններում, նրանց հետ խառն համարեալ. առանձին յարմար բնակարաններ չը կան: Ինքանք հիւանդները ոչ մի միջոց չեն ձեռք առնում իրանց առանձնացման համար. գիւղացիներն էլ բնաւ չեն քաշվում նրանցից: Աղքատ գիւղացու ընտանիքը օգտվում է հիւանդի կեանքի միացորդներին. նրա սպիտակեղէնը լուանում է իրանցի հետ խառն. հիւանդը երբեմն ի նշան իր առանձին բարեհաճութեան դէպի տանաէրերը նուիրում է նրանց իր հին շորերին, սպիտակեղէնից ու կապուտոված, հանգիստ խոզով գնում քաղաք, գովելով Բանանցի օդն ու ջուրը, չը մտածելով ընտել, որ վարակել է մի ամբողջ ընտանիք, մի ամբողջ գիւղ, խեղճ ու խաւար մարդկանց...

Բազմաթիւ փաստերից բերելով մէկը. մի քաղաքացի ընտանիք իր մի թորախտաւոր անդամով (կին) մի քանի ամիս ապրում է մի գիւղացու տանը. քաղաք ճանապարհվելիս բաւելիք հիւանդ կինը իր հին զգեստներից մի քանիսը նուիրում է գիւղացու կնոջ. վերջինս մինչև մի քառիս մնում է արագահոս թորախտից: Այս կնոջ շորերը (քաղաքացու ներկայում վարչութեան վրա կը դադ կուր:

Իրանք շիրաչիները մի տեսակ բնական ատուրութեամբ են համակված դէպի միմիանց: Պատճառն այն է, որ նրանցից ամեն մէկը աշխատում է միւսի յաճախորդները խել կամ հնարներ գործ դնել աւելի շատ մարդիկ գրաւելու: Աշխատում են իրարից խոյս տալ, փախչել աւելի հեռու, պարսկական խուլ անկիւններում, որպէս զի մենակ լինելն, առանց մրցակցի: Այս է պատճառը, որ միմիկու պարսկական քաղաքներում հայերը համախմբված են հայկական որոշ թաղերում, այստեղ թէհարանում նրանք շատ ցլիւ եկած են և մարդ կը դժուարանայ ասել, թէ ուր են բնակվում: Այս հանգամանքը շատ ֆնտաւ է նաև դարուցական, եկեղեցական, թատրոնական և այլ հասարակական հիմնարկութիւնների շահերին:

Պարսկաստանում ամեն տեղ հայերի համար առանձին դատաւոր կայ նշանակված, որ սաւափաւաւ է կոչվում: Սա իր ձեռքի տակ ունի մի խուլ գործաւորներ, որոնք Ֆարաճեք են կոչվում. նրանց է յանձնվում վճիռների գործադրութեան հսկումը: Բացի սրանից հայ շիրաչիները իրանց միջին ընտել են աւելի ազդեցիկ մարդիկ, որոնք հաշտարար միջնորդի դեր են կատարում երկու դժգոհ կողմերի և կառավարութեան պաշտօնեայի մէջ— դրանք քեալխուրաններ են: Սրանք համեմատաբար աւելի միջոց ունեցողներն են և որպէս քաղաքացիներ ունեն միաների վրա և ամեն ջանք գործ են դնում վէճերը իրանք մաքրելու, որովհետև գործը սարգարատի դատարանին

էրած), յափշտակվելով նրանց գեղեցկութիւնից, հագնում է նոյն գիւղացու ամուսնացածը: Նա էլ մեռնում է, երկու տարի տանջվելուց յետոյ: Գիւղացին ինքը հիւանդացու ու դեռ ևս քաշքշում է իր գոյութիւնը. նրա մահն էլ շատ հեռու է: Ես բերել եմ ինձ լաւ յայտնի անպայման ակնհայտ փաստը. իսկ ոչ այդքան ակնհայտ շատ ու շատ կայ:

Լինում են հիւանդներ, որոնք իրանց ուղղակի յանցաւոր կերպով են պահում, չափից դուրս անտարբեր են դէպի այն մարդկանց վիճակը, որոնք կարող են իրանցից վարակվել ու վարակվում են... Գնում են այդպիսի հիւանդները իրիկնապահին նստում գիւղի աղբիւրների ճանապարհներին ու յաճախակի, ծարաւը յագեցնելու համար, մօտ են կանչում պղղ ջրով սափորն ունին աղբիւրից տուն գնացող աղջկան, վերցնում են սափորը, գլխահներին քաշում, մի լաւ խում, մի լաւ «ուլախ» ասում ու սափորը յետ տալիս աղջկան. խեղճը ուսում է ու գնում, չը հասկանալով ընտել, որ սափորում սառը ջրի մէջ տուն է տանում Կոլի բացիլներին մի սոսկի վրձնմակ... Գուցէ պատմածն անհաւատալի թւայ, բայց ես այդ աշնոյս տեսել եմ մի քանի անգամ, տեսել եմ այդ յանցանքը գործելիս ոչ միայն անկիրթ, այլ և «կրթված», ինտելիգենտ» հիւանդներ: Իմ նկատողութեան այդպիսիներին միւրն ունեւում պատասխանեց՝ «Իմ մեղքիւց յետոյ թող ամբողջ աշխարհը քանդվի թէկուզ. ինչ անեմ, թէ ուրիշները կը վարակվեն ու կը մեռնեն: Ասում են, որ հիւանդութիւնը մարդուն որոշ չափով էզօրստ է դարձնում. բայց երբ նա այնպիսի հրէշաւոր չափերի է հասնում, պէտք է դատաւարտել ու դատաւիտել անխնայ...

Եթէ մեր գիւղում բժիշկ լինէր, նա կարող էր որոշ չափով աւնել հիւանդութեան տարածման առաջը ու հիւանդներին խելացիութեան սահմաններին մէջ պահել. բժիշկի կատարեալ բացակայութիւնը շատ պատասխում է այդպիսով հիւանդութեան տարածման ու զարգացման: Փանի որ Գանձակի բժիշկները թորախտաւորներին ուղարկում են գիւղը, նրանք մեծ բարոյական պատասխանատուութիւն են վերցնում իրանց վրա խեղճ գիւղական ժողովրդի պէտքը: Այստեղից են ուստի միջոցներ ձեռք առնել, որ նրանց հիւանդները չը վարակեն գիւղը, չը տարածեն սոսկալի հիւանդութիւնը. նրանցից մէկը գոնէ պէտք է առաւ իր հիւանդներին հետ միասին ապրել գիւղում: Իսկ ամենաարմատական միջոցը այն կը լինի, եթէ մեր յարգելի բժիշկները միջոցներ հայթայթեն մի հիւանդանոց, սանատորիա շինելու գիւղից դուրս ու այդպիսով թորախտաւորներին բոլորովին առանձնացնեն գիւղական ամբիւրից: Իրա մասին մանրամասն մի ուրիշ անգամ: Եթէ այսպէս շարունակվի, մի քանի տարուց յետոյ մեր գիւղը ուղղակի թորախտաւոր կը դառնայ, այլ ոչ կենսատու կուրօրտ, ինչպէս ցանկանում են այդ մեր յարգելի բժիշկները:

Ն. Տէր-Աւետիքեան

Ընկնելուց յետոյ, ոչ մի կողմն էլ բաւարարութիւն չը պիտի ստանայ և դեռ դատական ահաբի ֆնտա պիտի կրեն: Այստեղ են աւսել, թէ «ՄժՆԻՆԻ» ամբարածը շատ անգամ մուկը կաղայ: Շիրաչիների վաստակածն էլ ամբողջովին շատ անգամ ֆարաչներն ու սարգարատներն են վայելում: Ահա այս է գլխաւոր պատճառը, որ չը նայելով շիրաչութիւնը փող վաստակելու առատ աղբիւր է համարվում, սակայն նրանք մէջ մի չորս տուն չը կայ, որ 8—10,000 թուման կարողութիւն ունենայ. մնացածների ամբողջ կարողութիւնը կազմում է ինվիտարը և գուցէ մի 100 թուման էլ փող:

Այստեղ կայ մի ուրիշ մարմին, որ կառավարութեան աշնոյս աւելի հեղինակաւոր դերը ունի— դա ճագարաճօրիւնն է: Հայերի հետ մի աւելի լուրջ և պատասխանատու դէպք պատահած ժամանակ նրա միջամտութիւնը անհրաժեշտ է: Շիրաչիներին հետ յաճախակի պատահած խելիքներին պատճառով, կառավարական շրջաններում այն կարծիքն է կազմվել, թէ բոլոր հայերը այդ անարգ գործով են պարապում և ամեն մի ֆնտաւար դէպք նրանցից է ծագում: Որպէս զի այս ոչ ձեռնուու կարծիքը փարատվի և հայերի վարկը կառավարութեան աշնոյս բարձրանայ՝ հոգաբարձութիւնը և այստեղի մի քանի ակադեմիկ մարդիկ մտածեցին միջոցներ ձեռք առնել, որ շիրաչիները այդ ամբարի պարապմունքից ձեռք քաշեն և մի ուրիշ աւելի պատուաւոր գործով զբաղվեն:

ՆԱԽԱԿ ԽՄԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, մայիսի 27-ին

«Մշակ» 102-րդ համարում տպված էր մի թղթակցութիւն Բաթումից, որը սկսում էր հետեւել տողերով. «Թեթեալագ զբաւանք պիտի մազլէրն է (!) նա միայն աշխատում է իր կուրս տա Ժ համար (!) ուշադրութեան շահելով ոչ հեղինակի և ոչ հանդիսականների շահերը»:

Այս աղբյուրից նախաբանից անմիջապէս յետոյ, պիթթակցը աւելացնում է. «մեր խօսքը գերասան Արմենիանի մասին է»:

Յօդուածը վերջանում էր վերին տողերը պարզաբանող հետեւել բացատրութիւնով. «Գործողութեան կէսում սպասողական դրութեան ենթարկել ժողովրդին յատկապէս այն նպատակով, որ Արմենիանի նախկին չորս ընկերները իրանց ստորագրութեամբ մի ուղղված կարգան նրա հասցէին՝ «ապագայ Ազադան», հայկական բեմի փառք» և այն ամականներով:

Նախ իրերը իրանց խելական տեղը դնելու համար յայտնում եմ որ.— առաջինը Բաթումի մէջ ոչ թէ միայն «նախկին ընկերները» չեն ունեցել այլ և ոչ մի ծանօթ չունէին այնտեղ հանելիս. այնպէս որ, երբ մտադրեցի Բաթումից անցնել մի ներկայացում. ապա համար, չը դիտել ում դիտել և պատահմամբ վերցրել էի վերջին «Մշակում» տպված Բաթումի թղթակցի պ. Գ. Գրիգորեանի անուամբ և նրան դիմել էի, որ ինձ ծանօթացնէ տեղական սերտիւնի հետ: Երկրորդ, ուղերձը ստորագրված էր ոչ թէ չորս որոշ անհատութիւններից, այլ «Բաթումի ժողովրդական թատրոնի սերտիւն խմբից»: Երրորդ, ուղերձը «գործողութեան կէսում, ժողովրդին սպասողական դրութեան ենթարկելով» չը կարողացել, այլ երկրորդ ան տրաւ տին մի քանի ծագիւններին հետ միասին մատուցվեց բեմի վրա և ժողովրդի մէջից բարձրաձայն յայտնված ցանկութեան համաձայն վարադրը կրկին վեր բարձրացնել տալով կարգացվեց: Չորրորդ, ուղերձի մէջ չը կային համեմատութիւններ անող փրոն Եւթականից, այլ պարզապէս քաղաքական իդ ձեռք: Իսկ հինգերորդ և վերջապէս՝ ես բոլորովին անտեղեակ էի, թէ հասարակութեան կողմից ինձ որ և է մի բան էր տրվելու:

Այսքան յեղաթիււրումները պարզեցուց յետոյ, չեմ կարող ծածկել իմ յուզվածքն իր ճանաչարութեան զգացմունքի բացակայութեան դէմ, որը թոյլ է տալիս մի թղթակցի ապատրէս աղաւթի մի անհատի անունը կամ արժանապատուութիւնը առանց իրա վրա պարտաւորութիւն զգալու մանրամասն քննել ու տեղեկանալու գործին էութեանը, այլ հետեւելով պարզապէս բօլեական ներշնչմանը և կամ անտալով սրա ու նրա ստանդին, շատ անգամ նոյն իսկ պարզ ենթադրութիւնների վրա հիմնվելով:

Արմենիան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Բաւական երկար ժամանակ է հարց է յարուցված հիմնել «Երկաթէ խաչ» ընկերութիւնը, որի նպատակն է լինելու նիւթական օգնութիւն հասցնել Ռուսաստանի բոլոր երկաթուղիների վրա ծառայող ստորին պաշտօնեաներին, երբ նրանք, զբաղող գիւղատնտեսի պատճառով, ընկնեն նեղութեան մէջ: Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ այդ «Երկաթէ խաչ» ընկերութեան հիմնարկութեան հարցը հաւանորէն դրական վճիռ կը ստանայ մօտ ժամանակներս:

„РУСЬ“ լրագիրը հաղորդում է, որ թէյալվածաւորից շատերը, վախենալով, որ Չինաստանը չէզոքութիւնը կը խանգարէ և դրանից

Մէկ օր այդ խնդրի առիթով ժողովի կանգնեցին բոլոր շիրաչիները և այդ առաջարկութեան արվելը: Ամբողջ սերով համաձայնեցին իրան քաղվել այս պարապմունքից, եթէ մի աւելի յարմար և իրանց կարողութեան համեմատ գործ ճարվի:

Առաջարկութիւն եղաւ հիմնել մի ընդարձակ ակցիօնեական ընկերութիւն, որ ստեղծուր իրանց եւրօպայեաներին և հայերին ամտակարար է թան, օրինակ՝ հաց, իւղ, միս, ընդդէմներ, վառելիք և այլն և այլն... Ակցիան կը լինի շատ փքըր գումար, որ ամեն մարդ կարողանայ մասնակցել: Փոքր ակցիաներով մասնակցողներն ուրիշ շատ դժուրութիւններ կը տրվեն, օրինակ՝ իր յանձնարարվին զանազան պաշտօններ, որի համար իրանց ուժերը կը ստանան, բացի դրանից իրաւունք կունենան ապառիկ օգտվելու այդ պիտոյցներից՝ ապա գալով իրանց հաշիւից դուրս դալու պայմանով: Այս հաշիւը, եթէ իւրաքանչիւր շիրաչի այսօրվանից համաձայնվի իր ամբողջ կարողութիւնը այդ ընկերութեան մէջ բերել, նա իրաւող կերպով պիտի կարողանայ իր ընտանիքը ապրեցնել, առանց մի բանի նեղութիւնները համարել: Որովհետև շատերի ունեցածը ապրանք է միայն, օղի և գինի, ընկերութիւնը յանձն է առնում նոյն իսկ այդ ապրանքն ընդունելու, որպէս նրանց բաժնեգիր:

Պայմանները շատ ձեռնառու էին, ամենքը համաձայնվեցին: Իսկոյն մի յանձնաժողով ընտրվեց ընկերութեան կանոնադրութիւնը և

կառաջանայ թէյի խոշոր ճգնաժամ, շտապել էին ահագին քանակութեամբ Յէյլօն կղզու թէյ գնել անգլիական առեւտրական տներէ միջոցով: Այժմ այդ թէյը Ռուսաստանի գաւառներում ծախվում է ահագին գնով: Ու վերջնապէս, որովհետև մի քանի պաշտօնական աղբարարութիւններ հաստատում են, որ Ռուսաստանի առեւտրական յարաբերութիւնները Չինաստանի հետ երբեք չեն ընդհատվի:

Մայրաքաղաքի լրագիրներին ասելով, մի ամենօրեայ և հանրամատչելի թերթ եւ աւելանում է Պետերբուրգի մամուլի վրա: Նոր թերթի անունն է „Военное Время“, որ նուիրված պէտք է լինի բացառապէս պատերազմին և նրա առաջացած երևոյթներին: Թերթի նպատակն է հնար տալ գաւառական քաղաքների և գիւղերի բնակիչներին էժան գնով ամենօրեայ մեծ լրագիր ունենալ:

Մօսկվայի քաղաքային վարչութիւնը, ինչպէս երէկ մենք հաղորդել էինք, զբաղված էր եկող 500 եասպոսացի գերի գնիւորների և 10 օֆիցէրների համար բնակարան որոնելով: Այժմ լրագիրները հաղորդում են, որ բնակարաններ գտնվել են: Որոշվել է գնիւորներին բնակեցնել դատարկված գործարաններից մէկում, յարմարեցնելով շէնքը բնակութեան համար: Իսկ օֆիցէրներին «Երկաթուղային հիւանդանոց» անունը կրող համարներում, որ գտնվում է Կուրսկ տանող երկաթուղու կայարանի մօտերը:

Բազում լրագիրները լսել են, որ այնտեղի քաղաքագլուխ պ. Նովիկովը մտադրութիւն ունի թողնել իր պաշտօնը և առհասարակ քաղաքային ինքնավարութեան գործը և նուիրվել գրականութեան: Ասում են, որ նա ուզում է մասնակցել Պետերբուրգում նոր հիմնվելի «XX Вѣкъ» մեծ լրագրին, որի խմբագիրը լինելու է ֆինանսների մինիստրի նախկին օգնական Կավալովսկին:

Մայրաքաղաքի լրագիրներին ասելով, Ռուսական աղիւնագործութեանը եւ առեւտրիկ նպաստող ընկերությունների կայանում քննում է զօրաղդ գէպերի ժամանակ մարմնական վրանաստիճան ստացած բանւորների մասին մի կանոնադրութիւն, որը ներկայացրել է նրան ներքին գործերի մինիստրութեան բժշկական խորհուրդը:

Դեր բեռն տ քաղաքում, ինչպէս լսել է „Бак. Изв.“ լրագիրը, քաղաքային ինքնավարութիւնը բաց է անում այգեգործական, գինեգործական և բանջարաբուծական առաջին կարգի մի ուսումնարան: Ուսումնարանը պահվելու է քաղաքի հաշիւով, ստանալով երկրագործութեան մինիստրութիւնից տարեկան 3,500 ռուբլի օժանդակութիւն:

Լրագիրներին մէջ կարգում ենք, որ Կուրսկի շրջանից արտասահման է արտահանված ծրագիրը մշակելու:

Բայց, զօրաղդաբար, միայն այդ եղաւ նրանց արածը: Գանձախոււմը կանոնադրութիւնը մշակեց, շատ անգամներ ժողովի հրաւիրեց, որ կարգացվի, վերջացնեն, բայց ոչ որ չեկաւ: Մինչև օրս այդ խնդիրը ֆնտա պղպպէս առկալ: Գլուխ չը գալու պատճառը քեաղխուրդներին մէջ են որոնում: Նրանք թէև ժողովի ժամանակ իրանց համաձայնութիւնը տուին, բայց կէս-բերան. ներքուստ մի այսպիսի հաշիւ էին անում, այս լաւ է, մանր-մուշը շիրաչիները մէջ տեղից կը հեռանան, ասպարէզը կը ֆնտա միայն իրանց, իսկ մէկ անգամ կարասմաբաս ծախելուց յետոյ դժուար թէ նրանք կարողանան երկրորդ անգամ դրստովել: Այս հաշիւներով էլ խնդիրը ձգձգեցին, իսկ միւսներն էլ սրանց են հետևում:

Այդ ընկերութիւնը երբեք պէտք է գուրեզայ, որովհետև այդ միտքը յղացողները չեն ուզում ձեռք վերցնել: Թէ-նրանցիները ակցիօնեական ընկերութեան սեփականութիւն է: Անցեալ տարվայ գործունէութիւնից բաժնետէրերը համարեա մէկին մէկ շահել են:

Մտադրութիւն կայ նաև մի և նոյն պայմաններով մի «ատաղձագործարան» հիմնել, որը միաժամանակ պէտք է լինի որպէս արհեստաւորաց դպրոց: Այնտեղ պիտի աշակերտեն թէհրանի երեխաները:

Մ. Զառաֆեան

106,000 պուլէ ծխախոտ, որից 100,000 պուլէ՝ Աւստրո-Ունգարիա, իսկ 6,000 պուլէ՝ Իտալիա:

ԵՐԵՎԱՆԻՑ մեզ գրում են. «Մի ամսից աւելի է, որ տ. Սիրանոյշը գտնվում է Երևանում, տալով մի շարք ներկայացումներ քաղաքիս կուրբի դահլիճում: Երևանի հայ հասարակութիւնը երախտապարտ պիտի մնայ տ. Սիրանոյշին՝ նախ այն բաւականութեան համար, որ տեսնում է բնմի վրա լաւ կազմակերպված խմբի ներկայացում, և երկրորդ՝ որ տեսնում է առաջին անգամ տրվող պիեսները—նորութիւններ (Կեանք), «Պէտք է բաժանվենք», «Բազմեանք և ագլանեանք», «Կարմիր համազգեստ»: Յունիսի 1-ին խաղալու են «Պաշտպան» տ. Սիրանոյշի օգտին: Սակայն տեղերի գները այնքան մատչելի չեն հասարակութեան բոլոր խաւերի համար: Այդ պատճառով լրացնում է տեղիս սիրողների խումբը, տալով ժողովրդական ներկայացումներ անհամեմատ էփան գներով (12, 22, 32, 42 կոպէկ): Առաջին ներկայացման մասին (Մարտի 2-ին) Նրանից յետոյ սիրողների խումբը տուեց «Բաղդասար Ասկար» Պարոնեանի և 29-ին «Բարեգործութեան դիմակի տակ» է. Տէր-Գրիգորեանի: Միջխաղական էր տեսնել, թէ ինչպէս դահլիճում ինտելիգենտ հասարակութեան տեղ այսօր դահլիճը լցված է չուխաւոր—չուսուսուր հասարակութեամբ և ամենալիքին մօզպով հազնված կանանց տեղ այսօր բռնել են գլուխ ու բերան կապած կանայք»:

ԱՍԽԱԲԱՆԻՑ մեզ գրում են. «Այս տարի առաջին անգամ է, որ տեղիս արական գիմնական բաց է թողնում աշակերտներ, տալով նրանց հասունութեան վկայականներ: Աւարտեցին 13 հոգի, որոնցից 4 հոգի հայեր են. Նիկողայոս Տէրտերեան, Գրիգոր Կաճկաճեան, Միքայէլ Մարգարեան, Լևոն Օրբէլեան: Իգական գիմնական առաջին անգամ աւարտեց նաև մէկ հայուհի՝ օրիորդ Կաճկաճեան: Ուսումնարանի վարչութիւնը և աւարտող աշակերտների ծնողները հետագրով շնորհաւորեցին գնեցեալ Կուրսպատկիւնին, որի շնորհիւ է բացվել գիմնական—բերե հիմնադրի և նրանից շնորհակալութեան հետագիր ստացվեց»:

Ախալքալաքի գաւառի ՄԵՆՆԱՆԻՑ գիւղից մեզ գրում են հետևեալը. «Մեր մերձակայ Բօղանօվկա գիւղում մայիսի 30-ին, ցերեկը, փոթորիկի ժամանակ կայծակը խփեց երկանին և ջաղացական. երկանի երեք կտոր է եղել, իսկ ջաղացանը մեռել է: Կայծակը շանթի է երկանին և մարդկանց, ջաղացական ծոծրակից է խփել, ջրաղացում եղած միւս մարդիկ է երկաններն ուշաթափվել են. մեծերը ստող են, իսկ երեխաները վտանգի մէջ են. նրանց գրել էին հողի մէջ, որպէս զի փրկեն մահից»:

ԲԱՇԿԻԿԻՑ մեզ գրում են. «Այսօր, մայիսի 26-ին, ժամը երկուսին սկսեց սարսափելի և չը տեսնված կարկուտ տեղալ, որ 10 րոպէից յետոյ փոխվեց յորդ անձրևի: Կարկուտը գգալի կերպով քնանեց ցորենի և գարու արտերին: Առնատարակ այս տարի օր չէ անցնում, որ անձրև չը տեղալ: Չափազանց անձրևների պատճառով արտերում գոյացել են փուռեր»:

ՄԵՆՆԱՆԻՑ ԳԻԿԻՑ (Ախալք. գաւ.) մեզ գրում են. «Մայիսի 9 և 10-ին խիստ ձիւնախառն անձրևներ եկան և շրիւր բարձրացան: Մայիսի 11-ին մի 12 տարեկան աղջիկ սարում գետնակից անցելու ժամանակ խեղդվեց: Մեր գիւղում գողութիւնը անպակաս է. ամեն տարի լինում է մեծ և փոքր գողութիւն միայն անասունների, իսկ այս տարի դրամի գողեր են առաջ եկել. նորերս գիւղերը Սարգիս Դաւաղիւնեանցի կրպակը մտել են երգիկից և տարել 424 ռուբլի դրամով»:

ԱՍԽԱՆԱՆԻՑ մեզ գրում են. «Ինչպէս Անդրկովկասի շատ տեղերում, նոյնպէս միւղանում, այս տարի շատ տարօրինակ եղանակներ է անում: Սկսած մարտ ամսից մինչև այսօր համարեա ամեն օր շատ քիչ ընդմիջումներով անձրև էր գալիս, իսկ մայիսի սկզբներին նոյն իսկ շրջակայ լեռներում ձիւն է նստել բաւական հաստութեամբ, մի երեւոյթ, որ մեղանում չէր տեսնված այդ ժամանակին: Զիւնի և անձրևների պատճառով մի քանի օր մեղանում գգալի ցորենը եղան, որով բաւական քանակութեամբ: Բանջարանոց—

ների և ցանքների մեծ մասը ցրտահար եղան, իսկ ծառապտուղները համեմատաբար աւելի քիչ քնակեցին: Այս տարի թէ հացահատիկների և թէ ծառապտուղների բերքը անընդհատ տեղացուցում և շատ սակաւ արդիւնք է սպասվում: Դրանք արգելք եղան և գիւղական աշխատանքներին էլ»:

Ձանգերուրի գաւառի ՄԱՋԱՐ գիւղից մեզ գրում են. «Մայիսը վերջանալու վրա է, բայց տակաւին դարուն չէ եկել. մեր գիւղացիները դեռ նոր են սերմում դարնան ցանքը: Այսօր, մայիսի 12-ին, մօտ մէկ արշին բարձրութեամբ ձիւն եկաւ և սար ու ձոր ծածկեց սպիտակ սաւանով. գիւղացիների անասունները մնացին ձիւնի տակ: Անասուններին նորից գոմերը տարան, բայց դժբաղդաբար, դարման չը կար, որ անասուններին կերակրէին, ամբողջ հինգ օր անտանելի գրութեան մէջ մնացին գիւղացիները: Մայիսի 12-ին եկած ձիւնը շնորհիւ, Ուշափայլար կոչված սարում, թաւաբամայ էլլաղ եկող թուրք «այմաթալար» կոչված ցեղի ամբողջ ոչխարի հօտը կոտորվեց 1000 գլուխ, ինչպէս յայտնեցին իրանք թուրքերը, որոնք եկել են Զիւրաբէլի կողմերից մեր սարերը ամառն անցկացնելու»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐԱԶ

Ոչ ոքի յայցնի չէ գեներալ Կուրսպատկիւնի պալմը: Եւրօպական լրագիրների թղթակիցները վերջերս շարունակ լուրեր էին հաղորդում գեներալ Կուրսպատկիւնի բանակի շարժման մասին դէպի հարաւ, մինչ Ամերիկայի «New-York Herald» լրագիրը պնդում էր, թէ ռուսաց հրամանատարը պատրաստում է նահանջում գէպի հիւսիս: Այդ լրագրի տակով, նա դանդաղում էր մինչև այժմ նրա համար, որ Նիւ-Չիքոնում գտնվում էին պատերազմական միջոցների խոշոր պահեստներ, որ նա չէր կամենում դռնել: Ներկայումս հազարաւոր սայլեր փոխադրում են այդ պաշարները Մուկդէն և երբ նրանց փոխադրութիւնը կաւարտվի, իսկոյն կը սկսվի շարժումը դէպի հիւսիս: Եւրօպական մամուլը վերջին օրերը լի է յօդուածներով ռուսաց զխաւոր հրամանատարի պլանների մասին: Այդ առիթով «Temps» լրագիրը նկատում է, թէ բոլոր այդ տեսակ դատողութիւնները բոլորովին ապարդիւն են, որովհետեւ գեներալ-ադմիրալն Կուրսպատկիւնին, անկասկած, շատ լաւ յայտնի է մարշալ Վիլլարի այս ասացածը. «Եթէ իմ պլանն յայտնի լինէր իմ շապկին, ես նրան կայրէի»: (НОВОСТИ)

Կոլւ միջնէ վերջը: Պետերբուրգի ֆրանսիական դեսպան պ. Բոմպարը, որ նորերս գնաց Պարիզ, իրան յանկարծ պաշարված գրտաւ թղթակիցներին և տեսակցութիւն խնդրողներին հանդիս բազմութեամբ: Նրանց բոլոր հարցմունքներին, դէպքանք պատասխանեց միայն այն, թէ Պետերբուրգի տրամադրութիւնը ցոյց է տալիս, որ Ռուսաստանը որոշել է պատերազմը մինչև վերջը տանել: (НОВОСТИ)

Ինչպիսի և տրագիկում Պորտ-Արտուրը: «Փինլանդական լրագիրը» արտասուել է մի զվեղական լրագիրից մի զվեղական նամակ, որ նա գրել է Եւրօպայից և վերջերս եղել է Պորտ-Արտուրում: Անուանելով Պորտ-Արտուրը Արեւելի Գիրալտար, զվեղական գրում է. «Ինքը բնութիւնը շինել է նրան աշխարհիս ամենահարգ քրեղերից միւր, իսկ ռուսները, անգլիացիներին նման, կարողացել են օգուտ բաշկի բոլոր այն յարմարութիւններէ, որ տալիս է տեղը: Բոլոր այն լեռների գագաթները, որոնք շրջապատում են նաւահանգիստը իրեն պարիսպներ, պակկված են ամբողջութեամբով: Չանապառ պարսկութիւնները վրա դրված են 32 հատ տանիքիւ գիւղամանոց թնդանթներ, 50 վեց գիւղամանոց և 60 արագածիկ թնդանթներ: Հօր երկրորդական ցուցուցիչներ շարված են նաւահանգիստի մոտերում և նրան շրջապատող բարձրութիւնների վրա: Անթիլ հեռագիրը ապահովացնում է հարորդակցութեան հնարաւորութիւնը նաւահանգիստի պահակախմբի և էսկադրայի նաւերի մէջ: (Рыс. Вѣд.)

Ֆրանսիացիները պեսիմիս են դառնում: «Daily Mail» լրագրի Պարիզի թղթակիցը գրում է, թէ ֆրանսիացիները աւելի և աւելի պեսիմիզմով են համակվում Հեռաւոր-Արեւելի գործերի գրութեան վերաբերմամբ: «France Militaire» լրագրում, գեներալ Լեամիլը յայտնում է, որ ռուսների որոշումը յարձակողա-

կան դիրք չը բռնել մինչև որ չը կենտրոնացնեն ճնշող ոյժերը, ցոյց է տալիս, որ նրանք պատերազմի շատ զգույշ թէժօրիս ունեն: Մի ուրիշ ֆրանսիական զինուորական գրող ուշադրութիւն է դարձնում այն բանի վրա, թէ ինչ ընկել է ենթարկում իրան Ռուսաստանը, ուղարկելով իր բալտիկան նաւատորմը Հեռաւոր Արեւել: Նա գրանով հնարաւորութիւն է տալիս Գերմանիային ուժեղացնել իր գործունէութիւնը և զրկում է ֆրանսիային հաւաստիացումից Ռուսաստանի աշակցութեան մասին Բալտիկան ծովի չէզոքութեան վերաբերմամբ: Բայցի դրանից երկուշներ է աղղում կայսր Ֆրանց-Յովսէփի հնարաւոր մտնը, որից յետոյ Գերմանիան անպատճառ փորձ կանի գրաւել Տրիեստը: Գերմանիան—ասում են ֆրանսիացիները—այնպիսի մի պետութիւն է, որ ներկայ պատերազմից ամենամեծ օգուտները կը քաղէ: (Рыс.)

Պորտ-Արտուր Գում և Լեդիմիլին: «Վեստմինսթեր Լրագիրը» ասում է, թէ Պորտ-Արտուրի գրութիւնը համանմանութիւն ունի Լեդիմիլի գրութեան հետ անգլո-բոսնիական պատերազմի ժամանակ: Բայց Պորտ-Արտուրը Ռուսաստանի համար աւելի կարեւոր է, քան Լեդիմիլիան էր Անգլիայի համար: Եթէ Պորտ-Արտուրը ընկնէ, նրա հետ կը կորչի և ռուսաց խաղաղ-ովկիանոսեան նաւատորմի մեծ մասը և բալտիկան նաւատորմի անաւան ծրագիրը, որի վրա Ռուսաստանում այնքան մեծ յոյսեր են դնում, անիրաւոր ծիծելի կը դառնայ կամ գոնէ շատ գոռաւոր, որովհետեւ նա իր համար ծովային յենակէտ չի ունենայ Հեռաւոր-Արեւելում: (С. П. Вѣд.)

Նապոլեոնի 86-րոճ մի նոր սարսափելի միջոցը: «Daily Mail» լրագիրը պատմում է, որ եւրօպացիները հնարել են մի սարսափելի միջոց ռուսական նաւերը ոչնչացնելու համար: Եւրօպական կապիտան Օդա, որ հնարել է այն զարհուրելի սկանները, որոնք ոչնչացրին «Պետրօպոլիսկի» այժմ հնարել է մի նոր, աւելի սարսափելի միջոց, այն է նա հնարել է այժմ մի նաւա-մեքենայ, որը միջին տեղն է բռնում ականանաւի և ականի մէջ, լցված նիտրօ-գլիցերինով և շարժող՝ էլեքտրիկ շարժիչի օգնութեամբ: Այդ նաւամեքենաները կարող են շարժվել առանց էլեկաթի (նաւաստիներ և ծառայողների) և պայթել անթիլ երկրորդականութեան միջոցով: Որպէս զի այդ մեքենաներից չը քնապեն չէրը պետութիւնների նաւերը, եւրօպական կրէյսերները պէտք է պոյոյտ գործին դժոխային մեքենաների տեղաւորութեան շրջանում և նախադրուցներն նաւերին նրանց ներկայութեան մասին: Նոր հնարված եւրօպական դժոխային մեքենան պայթելուց յետոյ չի թողնի ջրի վրա որ և է վտանգաւոր բան ծովագնացութեան համար: (Рыс.)

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Frankf. Zeitung» լրագիրը հաղորդում է, որ Դիւրբուրգի վիլյալտում, Հայաստանում, մի նոր սաստիկ շարժում է սկսվել հայերի դէմ, տեղական բուրժուազի մէջ: Հնարաւոր են համարում, որ կոտորած կը լինի: Միւս կողմից Պարիզի «Temps» լրագիրը յայտնում է, որ Մասունի շրջանում արգէն սպանվել են 5000 հայ, զիւրադարպէս պատաններ և երեխաներ, որոնք չեն կարողացել փախչել սարերը թիւրքերի յարձակման ժամանակ (Р. В.):

Այդ լուրի մասին մի այլ լրագրում կարգում ենք. «Մասունում գտնվող ֆրանսիական, ռուսական և անգլիական հիւպատոսների գեկուցումներին համաձայն, մինչև 5000 հայեր—տղամարդիկ, երեխաներ և կանայք—սպանվել են քրեղերից այն արեւահեղ գրամայի ժամանակ, որ տեղի ունեցաւ վերջին օրերում: (Вас.)

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ
2 յունիսի

ՉԷԼԵԱՐԻՆՍԿԻ: Ժանապարհ ընկաւ. Կարմիր խաչի եկատերիւրուգեան բաժանմունքը բաղկացած երկու բժիշկներից, հինգ զինութեան քոյրերից և կառավարիչ Տէլեգինից:

ՄԻՆՍԿ: Ի նկատի ունենալով սաստիկ անաւարտութիւնը, դուռնան որոշեց միջնորդել կառավարութեան առաջ հասարակական աշխատանքներ կազմակերպելու մասին և համաձայնութիւն կայացնել զէնամուլի հետ իրաւործելու համար ենթադրեալ աշխատանքները ճանապարհներ շինելու վերաբերմամբ:

ՉԷՖՈՒ: (Բէյաթէ): Երկուշներ Պէչիկեան ծոցով գնացող շոգենաւի կապիտանը զեկուցանում է, որ երկուշներ գիշեր տեսաւ մեծ

նաւատորմի ցուցուցիչներ և լսեց թնդանթ-թաճուրթիւն 28 մղոն հեռաւորութեամբ դէպի հարաւ-արեւմուտը Պորտ-Արտուրից: Չինացիները խիստ հակողութիւն մտցրին ծովի և ցամաքի վրա՝ պատերազմող կողմերի համար կօնտրաբանդ տանելը արգելելու նպատակով, որովհետեւ գնաւատներ են ստացված, որ միջերներ են հասցնում եւրօպացիներին Չի-ֆուից:

ՏՕԿԻՕ: Յունիսի 2-ին (Բէյաթէ): Պորտ-Արտուրի նաւահանգիստի մոտերը ազատ է: «Նօվիկ» կրէյսերը երէկ դուրս եկաւ և յարձակում գործեց Պորտ-Արտուրը պաշարող եւրօպական նաւերի վրա: Կորէական ջրանցքում գտնվող Իկիսիմա կղզու վրա Կացամօտօ քաղաքից ստացված մասնաւոր տեղեկութիւնների համեմատ, ռուսական և եւրօպական նաւերի միջև տեղի ունի պատերազմ:

ԲԼԱԳՈՎՆՉՆԵՍԿ: Շրջանի զինուորական նաւահանգիստը, սաստիկացրած պաշտպանութեան կանօնների հիման վրա, Բլաղովնչնսկում յունիսի 1-ից առաջին անհրաժեշտութեան առարկաների նոր տակսա սահմանեց:

ՏՕԿԻՕ: (Բէյաթէ): Երեկոյեան լրագիրները տեղեկութիւնների համեմատ, «Նօվիկ» կրէյսերը, պորտ-արտուրեան նաւահանգիստից դուրս գալու ժամանակ գնում էր տասը սկանանաւերի հետ միասին: Եւրօպական նաւերը աշխատում էին խաբէութեան բաց ծովը դուրս բերել ռուսական նաւերը, բայց նրանք վերահարձան նաւահանգիստը կէսօրից յետոյ:

ԳՐՕԴՆՕ: Նահանգապետ Օսորգինի նախագահութեամբ սկսվեցին գիւղացիներին վերաբերեալ օրէնքները վերաքննող յանձնաժողովի նիստերը: Նիստերին մասնակցում էին 50 մարդ:

ՆԻԻ-ՉՈՒՈՒՆ (Բէյաթէ): Մուկդէնում գտնվում է քան հազար ռուսական զօրք, իսկ Լեոսեանում—քառապոս հազար: Ռուսները փորում են բերդային խոր փոսեր Լեոսեանի բոլոր կողմերում երեք մղոն հեռաւորութեամբ քաղաքից և թնդանթներ են դնում բարձունքների վրա:—Չիֆուից, մասնաւոր աղբիւրից այստեղ մէկ գերմանացու ստացած հեռագրի համաձայն, եւրօպացիները սաստիկ պարտութիւն կրեցին Պորտ-Արտուրի մօտ:

ԲԵՐԼԻՆ: Լեոսեանից հեռագրում են յունիսի 1-ից, որ Պորտ-Արտուրի մօտ տեղի ունէր ծովային պատերազմ: Ռուսական նաւատորմը դուրս էր եկել բաց ծովը: Ասում են, որ ռուսները կորցրին մէկ մարտանաւ, իսկ եւրօպացիները—մէկ կրէյսեր և չորս ականանաւ: Գործերի գրութիւնը սուր ընթացք է ստանում:

ՏՕԿԻՕ (Բէյաթէ): Միմօնսեկից գնալով եւրօպական երեք փոխադրող նաւեր յունիսի 2-ին առաւօտեան հանդիպեցին ռուսական նաւերին Կորէական ջրանցքի մոտերի մօտ: Ռուսները տասն և ութ անգամ թնդանթներ արձակեցին: Մէկ փոխադրող նաւ կարողացաւ ազատվել, մնացած երկուսի վրձնակը անյայտ է:—Ասում են, որ եւրօպական կրէյսեր «Նիտակա» յարձակում գործեց վաղիվօտուկեան էսկադրայի վրա Յուսիմա կղզու մօտ, բայց այդ լուրը հաստատութեան է կարօտ:—Եւրօպիա վերադարձող եւրօպական երկու փոխադրող նաւեր հանդիպեցին ռուսական նաւերին Իկիսիմա կղզու մօտ: Վերջինները 16 անգամ թնդանթներ արձակեցին: Փոխադրող նաւերը ազատվեցին Կացամօտօ նաւահանգիստում:

ՆԻԻ-ԵՐՈՒ: «Գիներալ Միլիում» շոգենաւը, որի վրա գերմանական լուծիւրական եկեղեցու կիրակնօրեայ դպրոցը զբօսանք կատարեց, այդվեց Իստ-Բիլլերի վրա Յուկէտի մօտ, որի ժամանակ սպանվեցին մօտ հինգ հարիւր մարդ:

3 յունիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Գիներալ-ադմիրալն Կուրսպատկիւնի հետագիրը Նորին Մեծութեան յունիսի 2-ից. «Յունիսի 1-ին Վաֆանդուի մօտ կռիւր տեղի ունէր հակառակորդի երկու գիւղիկայից ոչ-պակաս ոյժերի հետ: Մեր կուրսանները յունիսի 1-ին, սպանված է Չեր Մեծութեան 1-ին արեւելեան-սիբիրեան հրա-ցանաձիգ գնդի գնդապետ Յիւստոսով և գնդային ադմիրալն պոգոպուրիչի Դրագուսով-Նադոսիլնսկի, վիրաւորված են գնդա-րալ-մայօր Գերնգուս, որ մնաց զօրքի շարքում և ընդհանուր շտաբի կապիտան Կիրիցկի, բացի դրանից սպանված և վիրաւորված են 20 օֆիցերներ, որոնց ազգանուններն առ այժմ յայտնի չեն. զինուորիկ սպանված և վիրաւորված են 311. այդ թւից 1-ին հրա-ցանաձիգ գնդը կորցրեց 12 օֆիցերներ և 200 զինուորներ և առաջին թնդանթաձիգ

